ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N 621-Ա/2 «15» մայիսի, 2020 թ.

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ**

**1.** Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի ընտրության մրցույթը:

**2.** Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված N 2-ի:

**3.** Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

**ՆԱԽԱՐԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Հավելված N 1*
*ՀՀ ԿԳՄՍ նախարարի*
*2020 թ. մայիսի 15-ի*
*N 621-Ա/2 հրամանի*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում **կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված** գիտական նախագծերի հայտերի ընտրության**ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտը լրացնում և ներկայացնում է գիտական խմբի ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի միջոցով (grants.scs.am)՝ մինչև **2020 թ. հունիսի 26-ը** ներառյալ: Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 09:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև **2020 թ. հուլիսի 3-ը** ներառյալ:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Կոմիտեի գիտական քաղաքականության վարչության գիտական արդյունքի առևտրայնացման և ինովացիոն ծրագրերի բաժնում, հեռ.՝ 210 140 (105):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն

*Հավելված N 2*
*ՀՀ ԿԳՄՍ նախարարի*
*2020 թ. մայիսի 15-ի*
*N 621-Ա/2 հրամանի*

# ՀՐԱՎԵՐ

# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

## 1. Ընդհանուր դրույթներ

**1.1.** Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) հայտերի (այսուհետ՝ Հայտ) մրցույթն (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 15-ի N 621-Ա/2 հրամանի:

**1.2.** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում, համաֆինանսավորման սկզբունքով, կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար առավելագույնը 24 միլիոն ՀՀ դրամ (ներառյալ ավելացրած արժեքի հարկը) կազմող դրամաշնորհներ կտրամադրի 4-6 անձից բաղկացած գիտահետազոտականխմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված մինչև 24 ամիս տևողությամբ գիտական նախագծերի:

**1.3.** Մրցույթի շրջանակներում դրամաշնորհներ կտրամադրվեն՝

- գիտական և գիտատեխնիկական գործունեության «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ», «Գյուղատնտեսական գիտություններ» բնագավառներին (Հավելված N 2.1) համապատասխանող գիտական նախագծերին:

**1.4.** Առավելություն կտրվի ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկված և գյուղատնտեսության կարիքներից բխող «Խաղողի ողկույզակերի մանրէաբանական պաշտպանության ինսեկտիցիդ», «Հումուսի արտադրություն», «Տերևային սնուցում» ուղղություններով Նախագծերին (http://scs.am/files/grutyun-EN-18.02.2020.pdf):

**1.5.** Համաֆինանսավորման մասնաբաժինը պետք է կազմի Կոմիտեի կողմից տրամադրվող գումարի առնվազն 25 տոկոսը:

**1.6.** Համաֆինանսավորող կարող է հանդիսանալ հայաստանյան կամ օտարերկրյա այն իրավաբանական անձը, որը համաֆինանսավորումը կկատարի ոչ Հայաստանի Հանրապետության բյուջետային միջոցներից:

**1.7.** Համաֆինանսավորող կողմ հանդիսացող կազմակերպությունը պետք է ստեղծված լինի հայտը ներկայացնելուց առնվազն 3 տարի առաջ:

**1.8.** Հայտը չի քննարկվում, եթե՝

- նախկինում նույն ղեկավարի կողմից իրականացված գիտական թեմայի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվել կամ դրա վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- ամբողջությամբ կամ մասամբ կրկնում է Հայտը ներկայացրած կազմակերպության կամ Խմբի կողմից նախկինում իրականացված կամ ներկայումս իրականացվող բազային ծրագիրը կամ գիտական թեման:

**1.9.** Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև հաշվետվություն ներկայացնելու դեպքում Խմբի ղեկավարը պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

**1.10.** Նախագծի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

**-** *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ _____ ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

- *Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке МОНКС РА в рамках научного проекта № _____.*
- *The work was supported by the Science Committee of MESCS RA, in the frames of the research project № _____.*

**1.11.** Նախագծի իրականացման ընթացքում, 12 ամիսը լրանալուց հետո Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (տարեկան) հաշվետվություն, որի հիման վրա մասնագիտական փորձագիտական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) տալիս է եզրակացություն՝ Նախագծի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

**1.12.** Նախագծի ավարտից հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ պլանավորված արդյունքների և ստացված փաստացի արդյունքների համապատասխանության և հաշվետվությունն ընդունելու մասին:

**1.13.** Նախագծի հետագա ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի կողմից տրված փորձաքննության բացասական եզրակացության հիման վրա:

**1.14.** Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Նախագծի անոտացիան և հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

## 2. Խմբին ներկայացվող պահանջները

**2.1.** Խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ և Նախագծի կատարման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

**2.2.** Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը) չեն կարող ընդգրկվել սույն Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

**2.3.** Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ թեմաները (նախագծերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Նախագծերի ֆինանսավորման սկիզբը:

**2.4.** Խմբի ղեկավար կարող է լինել գիտական աստիճան ունեցող անձը, ում 70 տարին չի լրանում մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը:

**2.5.** Խմբի ղեկավարը պետք է ունենա առնվազն 5 տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 տարիների ընթացքում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Web of Science կամ Scopus) հրապարակված առնվազն 2 հոդված:

**2.6.** Խմբում պետք է ընդգրկված լինի մինչև 35 տարեկան առնվազն մեկ կատարող:

**2.7.** Խմբում չեն կարող ընդգրկվել բակալավրի աստիճան ունեցող կամ բակալավրիատի ուսանող հանդիսացող կատարողներ:

**2.8.** Հայտում Խմբի ղեկավարի ստորագրությունը պետք է հաստատված լինի Հայտը ներկայացնող կազմակերպության գիտական քարտուղարի կամ ղեկավարի ստորագրությամբ**:**

**2.9.** Խմբի անունից կարող է հանդես գալ միայն Խմբի ղեկավարը:

## 3. Հայտ ներկայացնելը

**3.1.** Հայտը (Հավելված N 2.3) լրացնում և ներկայացնում է Խմբի ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (grants.scs.am)՝ մինչև 2020 թվականի **հունիսի 26-ը**: Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

**3.2.** Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- Խմբի ղեկավարի դիմումը (Հավելված N 2.2),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ֆինանսական նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- մինչև 35 տարեկան կատարողի անձնագրի պատճենը, ինչպես նաև մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի պատճենը, իսկ ասպիրանտ կամ մագիստրանտ հանդիսանալու դեպքում՝ տեղեկանք, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին:

**3.3.** Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև 2020 թվականի **հուլիսի 3-ը** ներառյալ:

**Ուշադրություն. Հայտերը, որոնք չեն ուղարկվել ըստ վերը նշված կարգի և մինչև վերը նշված ժամկետը, չունեն ծածկագիր, հետևաբար, քննարկման ենթակա չեն: Կոմիտեն քննարկման է ընդունում միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած Հայտերը:**

## 4. Հայտերի գիտական փորձաքննությունը

**4.1.** Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են դրանց գնահատման համար ձևավորված Խորհրդին՝ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

**4.2.** Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են՝ Հայտի գիտական և գիտատեխնիկական նորույթն ու արդիականությունը, Խմբի ղեկավարի և կատարողների ձեռքբերումները գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառում, նրանց մասնագիտական որակավորումը և տվյալ գիտական նախագծի պատշաճ կատարման կարողությունը, գիտական Նախագծի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, նախահաշվի հիմնավորվածությունը, համաֆինանսավորման ծավալը, առևտրայնացման հեռանկարը, ինչպես նաև Մրցույթի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

**4.3.** Կոմիտեի, Խորհրդի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

**4.4.** Գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով ձևավորում է վարկանիշային ցանկ և ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

**4.5.** Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

**4.6.** Կոմիտեի նախագահը, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական ծրագրերի ֆինանսավորման ենթածրագրի հատկացումների չափից, որոշում է գիտական և

գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը, որին հավասար կամ դրանից բարձր գնահատված Նախագծերը երաշխավորվում են ֆինանսավորման: Կոմիտեի նախագահը հաստատում է Նախագծերի ու դրանց ղեկավարների ցանկը՝ նշելով յուրաքանչյուր Նախագծի կատարման համար նախատեսվող ֆինանսական հատկացման չափը:

**4.7.** Կոմիտեն Համակարգի (grants.scs.am) միջոցով Խմբերի ղեկավարներին տրամադրում է գիտական փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագիտական եզրակացությունը (ապահովելով փորձագետի անանունությունը), Խորհրդի գնահատականը, շեմային գնահատականը, Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը:

**4.8.** Մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված Նախագծերի և դրանց ղեկավարների ցանկը տեղադրվում է Կոմիտեի պաշտոնական կայքում:

**4.9.** Կոմիտեն կազմակերպությանը տրամադրում է տվյալ կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Նախագծերի ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Նախագծի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

**4.10.** Նախագծերը ֆինանսավորման երաշխավորելիս առաջնահերթությունը տրվում է տնտեսության կարիքների բավարարմանն ուղղված գիտական թեմաներին:

## 5. Այլ դրույթներ

**5.1.** Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Խմբի (գիտական նախագծի) ղեկավարի միջև ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 5.2 և 5.3 կետերում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

**5.2.** Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր Նախագծի ղեկավարի և կատարողների միջև, գիտական

կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և Խմբի (Նախագծի) ղեկավարի միջև («Ծառայությունների մատուցման պայմանագիր»):

**5.3.** Գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և համաֆինանսավորող կազմակերպության միջև կնքվում է համապատասխան պայմանագիր:

**5.4.** Նախագծերի համաֆինանսավորումը պետք է կատարվի երկու փուլով՝ նախագծի մեկնարկին՝ ոչ պակաս քան համաֆինանսավորման գումարի կեսը, իսկ մեկնարկից 12 ամիս հետո Պայմանագրով նախատեսված մնացած գումարը:

**5.5.** Նախագծերի ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սկսվում է համաֆինանսավորման համապատասխան ծավալը փոխանցելուց հետո:

**5.6.** Համաֆինանսավորող կազմակերպության կողմից երաշխավորված գումարը Պայմանագրում նշված ժամկետներում չփոխանցելու դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված:

**5.7.** Նախահաշիվը պետք է ներկայացնել Նախագծի ընդհանուր արժեքի համար՝ յուրաքանչյուր տարվա համար առանձին ներկայացնելով Կոմիտեի և համաֆինանսավորող կազմակերպության կողմից հայցվող ֆինանսավորման ծավալները:

**5.8.** Նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս պետք է Խմբի անդամների աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել մինչև 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

**5.9.** Եթե աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարը պակաս է վերոնշյալ ծավալից, ապա տարբերությունը կարելի է օգտագործել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

**5.10.** Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների և գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող այլ նյութերի ձեռքբերման ծախսեր: 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը գերազանցող սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը պետք է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

**5.11.** Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել միջազգային գիտական միջոցառումներին մասնակցելու

համար: Գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերը պետք է հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ:

**5.12.** Գործուղումների օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Նորոշմամբ սահմանված ծախսերի չափերի, բայց ոչ ավել՝ քան ամսական 1500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12 ամսվա կտրվածքով):

**5.13.** Նախահաշվի «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսվում են գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թողնված ֆինանսական միջոցները, որոնցով տնօրենը (ռեկտորը) ապահովում է գիտական կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում Նախագծի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերը չպետք է գերազանցեն Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի 7 տոկոսը:

**5.14.** Նախահաշվի «Համաֆինանսավորման ծախսեր» հոդվածով կարելի է նախատեսել աշխատավարձի, սարքերի և/կամ նյութերի ձեռքբերման, գործուղումների կամ Նախագծի իրականացման անհրաժեշտությունից բխող այլ կարիքների համար:

**5.15.** Նախագծի իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ Նախագծի Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարը, Կոմիտեի համաձայնությամբ, կարող է վերաբաշխվել տարեկան մեկ անգամ՝ չգերազանցելով նրա 20 տոկոսի չափը:

**5.16.** Խմբի ղեկավարի երկու ամիս Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Նախագծի ֆինանսավորումը դադարեցվում է: Խմբի անդամի երկու ամիս Հայաստանի Հանրապետությունից կամ Նախագծի աշխատանքներից անընդհատ բացակայության դեպքում Խմբի ղեկավարը 10-օրյա ժամկետում դիմում է Կոմիտե՝ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի և տարիքային խմբի համարժեք փոփոխություն կատարելու կամ Խմբի անդամների թիվը մեկով կրճատելու (եթե մինչև 35 տարեկան անդամը չէ) միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմքերը: Խմբի անդամների թվի կրճատման դեպքում Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

*Հավելված N2.1*

*Կիրառական արդյունքի ձեռքբերմանն*

*ուղղված գիտական նախագծերի հայտերի ընտրության մրցույթի հրավերի*

# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

## *1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

1.1. Մաթեմատիկա

1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3. Ֆիզիկա և աստղագիտություն

1.4. Քիմիա

1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6. Կենսաբանական գիտություններ

1.7. Այլ բնական գիտություններ

## *2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ*

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3. Մեխանիկա

2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5. Քիմիական տեխնոլոգիաներ

2.6. Նյութագիտություն

2.7. Բժշկական սարքաշինություն

2.8. Էկոլոգիա

2.9. Կենսատեխնոլոգիա

2.10. Նանոտեխնոլոգիա

2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

## *3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

3.1. Ընդհանուր բժշկություն

3.2. Կլինիկական բժշկություն

3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

3.4. Այլ բժշկական գիտություններ

## *4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն

4.2. Բուսաբուծություն

4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն

4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

4.5. Այլ գյուղատնտեսական գիտություններ

*Հավելված N2.2*
*Կիրառականարդյունքիձեռքբերմանն*
*ուղղված գիտականնախագծերի հայտերի ընտրության մրցույթի հրավերի*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ_____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

**ԴԻՄՈՒՄ**

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացնում եմ «_____ » վերնագրով հայտը:

Խնդրում եմ սահմանված կարգով ընթացք տալ:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«____» _____ 2020 թ.

*Հավելված N 2.3*
*Կիրառական արդյունքի ձեռքբերմանն*
*ուղղված գիտական նախագծերի հայտերի ընտրության մրցույթի հրավերի*

# ՀԱՅՏ
# ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
# ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Հայտը հանձնված է «_____» _____ 2020 թ.Ծածկագիր՝ _____
*(Ձևավորվում է Համակարգի կողմից)*

## ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Նախագծի վերնագիրը, բնագավառը և մասնագիտական դասիչը, ակնկալվող արդյունքը
2. Հուշող (բանալի) բառեր
3. Ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թիվը, գիտական աստիճանը, պաշտոնը, հեռախոսը և էլեկտրոնային հասցեն
4. Կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գերատեսչական պատկանելությունը, հասցեն, հեռախոսը, պաշտոնական կայքէջը և էլեկտրոնային հասցեն
5. Համաֆինանսավորող կազմակերպության ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թիվը, պաշտոնը, հեռախոսը, էլեկտրոնային հասցեն
6. Համաֆինանսավորող կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը, գերատեսչական պատկանելությունը, հասցեն, էլեկտրոնային հասցեն, պաշտոնական կայքէջը և հեռախոսը
7. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը
8. Խմբի անդամների (ներառյալ ղեկավարը) թիվը
9. Նախագծի անոտացիա մինչև 0.5 էջ
10. Մինչև 3 անցանկալի փորձագետների ցուցակ
11. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը
12. Վերադիր ծախսերի գումարը
13. Կոմիտեից հայցվող ընդհանուր գումարը

14. Համաֆինանսավորման ընդհանուր գումարը
15. Նախագծի իրականացման համար անհրաժեշտ ընդհանուր գումարը (նախագծի ընդհանուր արժեքը)

Ղեկավարի ստորագրությունը _____

Կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությունը _____

Համաֆինանսավորող կազմակերպության ղեկավարի ստորագրությունը_____

«____» _____ 2020 թ.

**Կ.Տ**

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂ(ՆԵՐ)Ի ՄԱՍԻՆ

1. *Ազգանուն, անուն, հայրանուն(հայերեն, անգլերեն, ռուսերեն)*
2. *Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը*
3. *Կրթությունը (բուհ, մասնագիտություն)*
4. *Գիտական աստիճանը*
5. *Պաշտպանության տարեթիվը*
6. *Աշխատանքի վայրը, պաշտոնը*
7. *Հեռախոսը (աշխատանքային, բջջային)*
8. *Էլեկտրոնային հասցեն*
9. *Վերջին 5 տարիների գիտական հրապարակումները (առավելագույնը 10)*

# ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 13 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

**Նախագծի անվանումը**

**Նպատակը և խնդիրները (մինչև 1 էջ)**

**Արդիականությունը (մինչև 1 էջ)**

**Հետազոտական ծրագիրը (մինչև 4 էջ)**

**Իրականացման եղանակները, մեթոդաբանությունը (մինչև 1 էջ)**

**Օրացուցային պլան (ցանկալի է նաև Գանտի աղյուսակ) (մինչև 1 էջ)**

**Նախագծի իրականացման համար առկա և անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները (մինչև 1Էջ)**

**Նախագծի կատարողների ձեռքբերումները և փորձը տվյալ բնագավառում (մինչև 1 էջ)**

**Ակնկալվող արդյունքի՝**

[1] *Դատարկ դաշտերը նախատեսված են տեքստը շարադրելու համար:*

**1) տեխնիկական ցուցանիշները**

**2) կիրառության բնագավառները**

**Նախագծի մշակվածության ներկա փուլը/աստիճանը**

- ☐ կոնցեպցիա
- ☐ գիտահետազոտական աշխատանք
- ☐ փորձակոնստրուկտորական աշխատանք
- ☐ փորձատեխնոլոգիական աշխատանք
- ☐ այլ (լրացնել հաջորդող վանդակում)

**Նմանակների հետ համեմատության ցուցանիշները՝**

հիմնական տեխնիկական առավելությունները և/կամ թերությունները/ ցուցանիշները

հիմնական տնտեսական առավելությունները և/կամ թերությունները/ ցուցանիշները

հիմնական բնապահպանական առավելությունները և/կամթերությունները/ ցուցանիշները

այլ

## ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ[2]

| | |
|---|---|
| Ի՞նչ ծավալի ֆինանսավորում է անհրաժեշտ նախագծի արդյունքների առևտրայնացման հետագա ներդրումային ծախսերի համար: | հազ. դրամ |
| Ի՞նչ ժամանակահատվածներում է հնարավոր հասնել ծախսածածկման: | Ամիս |
| Քանի՞ աշխատատեղ կարող է ստեղծվել նախագծի արդյունքերի առևտրայնացման և հետագա արտադրության կազմակերպման համար: | |
| Ո՞վքեր կարող են լինել նախագծի արդյունքի հնարավոր սպառողները (սպառողների ու պահանջմունքի մոտավոր քանակները առևտրայնացումից հետո առաջին երեք տարիների համար): | |
| Սպառողների ո՞ր պահանջմունքները կբավարարվեն նախագծի արդյունքների առևտրայնացման միջոցով (ներկայումս ինչպես են բավարարվում այդ պահանջմունքները և ինչ առավելություններ կամ թերություններ ունի ձեր առաջարկը ներկայիս լուծումների համեմատ): | |
| Ի՞նչ մասնագետներ են անհրաժեշտ նախատեսվող արդյունքի առևտրայնացման և հետագա արտադրության համար: | |
| Արդյո՞ք նախատեսվող բիզնեսը կարող է լինել շահութաբեր՝ առևտրայնացումից հետո առաջին երեք տարիների համար: | |
| Ինչպիսի՞ այլ տնտեսական արդյունք կարող է գրանցվել նախագծի արդյունքերի առևտրայնացման շնորհիվ: | |
| Տնտեսության մեջ ներդրման համար անհրաժեշտ ներդրումներն ու ժամկետները | |

[2] *Լրացվում է համապատասխան տվյալների առկայության դեպքում:*

# ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____
*(ձևավորվում է Համակարգի կողմից)*

*հազար դրամ*

| 1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկ) | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 թ. (4 ամիս) | | | 2021 թ. | | | 2022 թ. (8 ամիս) | | |
| Ազգանուն,անուն, հայրանուն | Ամսական | Ամիսների քանակը | Դահանջ-վող գումարը | Ամսական | Ամիսների քանակը | Դահանջ-վող գումարը | Ամսական | Ամիսների քանակը | Դահանջ-վող գումարը |
| 1) | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| ***ԸՆԴՀԱՆՈՒՐ*** | | | | | | | | | |

| 2. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում | | | |
|---|---|---|---|
| **2.1.ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐԵՎԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** (150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ) | 2020 թ. | 2021 թ. | 2022 թ. |
| 1) | | | |
| 2) | | | |
| … | | | |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | | | |
| **2.2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ** (հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ) | | | |
| 1) | | | |
| 2) | | | |
| … | | | |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | | | |
| **2.3.ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ** | | | |
| **ԿՈՄԻՏԵԻՑ ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ (աշխատավարձևայլծախսեր)** | | | |

| 3. ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ | | |
|---|---|---|
| 150,0 հազար ՀՀդրամը գերազանցող բոլոր ծախսերը հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ | Առաջին փուլ (12 ամիս)2020-2021 թթ. | Երկրորդ փուլ (12 ամիս) 2021-2022 թթ. |
| 1) | | |
| 2) | | |
| … | | |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ | | |
| **ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ** | | |

Խմբի ղեկավար՝ _____ _____
*(ստորագրություն)* *(անուն, ազգանուն)*

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
*(ստորագրություն)* *(անուն, ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____
*(ստորագրություն)* *(անուն, ազգանուն)*

Համաֆինանսավորող կազմակերպության ղեկավար՝ _____ _____
*(ստորագրություն)* *(անուն, ազգանուն)*

*Կ.Տ.*

# ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ